

Չարաշահումների խնդիր չկա



Գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) նախագահ Սամվել Հարությունյանի հետ զրուցել ենք ԳՊԿ-ի մեկ տարվա աշխատանքների, բացթողումների և առաջիկա անելիքների շուրջ

Պարոն Հարությունյան, հոկտեմբերի 24-ին «Միջազգային գիտական և գիտատեխնիկական ոլորտում 2011 թ. հիմնական ձեռքբերումները» թեմայով մամուլի ասուլիս հրավիրեցիք: Կարելի՞ է արդյոք այն համարել ամփոփիչ անցնող տարվա համար:

Ոչ, ամփոփիչ համարել չենք կարող, քանի որ այդ ասուլիսից հետո բավականին իրադարձություններ տեղի ունեցան: Դրանից հետո մասնակցել են Բուդապեշտում համաշխարհային գիտական ֆորումին, որտեղ մասնակցում էին աշխարհի առաջատար գրեթե բոլոր երկրների գիտության կառավարիչները, ակադեմիաների նախագահները և գիտության նախարարները (Հայաստանից հրավիրված էինք ես և ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը) և բազմաթիվ հանդիպումներ ունեցանք: Մասնավորապես զրուցել ենք Բրազիլիայի գիտության և տեխնոլոգիաների նախարարի հետ: Բրազիլիան գիտության ոլորտում ամենաառաջադեմ քաղաքականություն վարող երկիրն է համարվում, որը ահռելի գումարներ է ծախսում այդ ոլորտում: Նախանցած տարի Բրազիլիայի դեսպանը եղավ ինձ մոտ և քննարկեցինք ապագայում ինչ-որ ձևով համագործակցելու հարցը: Բանն այն է, որ երկու երկրների նախագահների մակարդակով այցելություններ չեն եղել և առաջին դեմքերի մակարդակով դեռ պայմանագրեր չկան: Համենայն դեպս, հաջորդ համաշխարհային գիտական ֆորումը կլինի Բրազիլիայում՝ 2013-ին, և ԳՊԿ-ի նախագահին և ԳԱԱ նախագահին հրավիրելու են, և մինչև այդ առաջին դեմքերի մակարդակով կլինեն պայմանագրեր այս երկու երկրների միջև, և մենք ռեալ հնարավորություն կունենանք պայմանագիր ստորագրել գիտության ոլորտում համագործակցելու համար:

Դրանից հետո մեկ այլ գործուղում եղավ. միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կողողինացիոն խորհրդի նիստը տեղի ունեցավ, որտեղ քննարկվում են միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ապագայի խնդիրները: Ես զեկույց ներկայացրի՝ Հայաստանի վերաբերմունքը միջազգային գիտատեխնիկական կենտրոնի աշխատանքի նկատմամբ, հայտարարվեց, որ Հայաստանը գիտատեխնիկական կենտրոնի հետ սերտ համագործակցել է մինչև այսօր և

պատրաստ է ապագայում նույնպես շարունակել, որովհետև ծանր տարիներին այդ կենտրոնը մեր կողքին է եղել, գրեթե 39 մլն դոլարի աջակցություն ենք ստացել այդ կենտրոնից, և Հայաստանը եղել է ակտիվ մասնակից երկրներից մեկը: Ի դեպ, Ռուսաստանից հետո շահած գրատների քանակով Հայաստանը երկրորդ տեղում է:

Այսօր էլ է այդպես:

Այսօր Հայաստանն առաջին տեղում է: Միայն այս տարի Հայաստանը շահել է ութ գործընկերային ծրագրեր և մեկ ռեզուլյար ծրագիր: Այս ծրագրերի ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 2,5 մլն դոլար: Հայաստանի գիտնականները այնտեղ բավական բարձր վարկանիշ ունեն: Ի դեպ, ասեն, որ այնտեղ հայկական ծրագրերից ընդամենը տասը ծրագիր էր քննարկվում, որոնցից երեքը ստացել էին ամենաբարձր կարգավիճակը, իսկ մնացած յոթը ստացել են երաշխավորման ֆինանսավորման կարգավիճակ: Փաստորեն, մեր ծրագրերից որևէ մեկը չի մերժվել, այսինքն՝ տասն էլ բավական լուրջ արժեք ներկայացնող ծրագրեր են եղել: Մենք հայտարարեցինք, որ Հայաստանը պատրաստ է գիտատեխնիկական կենտրոնի հետ ապագայում նույնպես համագործակցել, բայց գիտատեխնիկական կենտրոնի առաքելությունն ըստ երևույթին պետք է վերանայվի, որովհետև հիմնական խնդիրը, որը գիտատեխնիկական կենտրոնը դրել էր նախկինում, կարելի է ասել հիմնականում ավարտված է, և գիտատեխնիկական կենտրոնը ճիշտ կլինի ապագայում զբաղվի հիմնականում գիտություն-արտադրություն, գիտություն-կրթություն խնդիրներով: Դրվեց խնդիր՝ ավելի շատ ինովացիոն ինչ-որ ֆոնդի դերակատարում ունենալ, և ինչու չէ, պետությունները նույնպես իրենց մասնաբաժնով մտնեն: Օրինակ՝ եթե ապագայում Հայաստանը նման կառույց ստեղծի, կարծում են՝ մեր կառավարությունը կհամաձայնվի, որ մենք մեր մասնաբաժնով մտնենք, այսինքն՝ ֆոնդի մեջ մենք էլ որոշակի ներդրում ունենանք, և եթե հաշվի առնենք, որ Հայաստանն ամենաակտիվ մասնակիցներից մեկն է, ապա ես ակնկալում եմ՝ մեր յուրաքանչյուր դրած մեկ դոլարի դիմաց մենք կարող ենք չորս-հինգ դոլար հետ ստանալ:

Պարոն Հարությունյան, դատելով հոկտեմբերի 24-ի մամուլի ասուլիսից, գիտատեխնիկական ոլորտում տարվող քաղաքականության մեջ մեծ տեղ է հատկացվում «ՔԵՆՂԼ» ծրագրի իրականացմանը: Ո՞րն է պատճառը:

Չեմ կարող ասել ամենամեծ տեղը “ՔԵՆՂԼ”-ին է հատկացվում: “ՔԵՆՂԼ”-ը պետական կարևոր ծրագիր է համարվում, հայտարարվել է ՀՀ կառավարության կողմից մեր գիտության առջև դրված գերակա խնդիր, և այդ ուղղությամբ մենք բավական աշխատանքներ ենք արել: Խոսակցություններ էին պատվում, որ իբր “ՔԵՆՂԼ” նախագծի համար նվիրաբերած Գերմանիայի Ղեյզի կողմից և SLS-ի շվեյցարական սարքերը հին սարքեր են, բայց դա չի համապատասխանում իրականությանը, որովհետև եթե ուզում են, կարող են կազմակերպել՝ գնան իրենց աչքով տեսնեն՝ դրանք գերժամանակակից սարքավորումներ են, որոնք օգտագործվում են գծային արագացուցչի մեջ և ապագայում նաև օդակի մեջ: Մոտավորապես երեք միլիոն եվրոյի սարքեր ենք նվեր ստացել, և Ղեյզիի ղեկավարության և SLS-ի տնօրինության քննարկումների ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց, որ մոտավորապես մեկ միլիոն եվրոյի էլ մենք դեռ սարքավորումներ ենք ստանալու: Այսինքն՝ սա իրոք ես համարում եմ մեր գիտության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը, որովհետև դա մեզա ծրագիր է, իսկ մեզա ծրագրերը սովորաբար իրենց հետևից շատ մեծ հետևանքներ են ունենում: Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ եթե գիտության ոլորտում իրականացվեց մեզա ծրագրեր, ապա այդ ծրագրերը դրական իմաստով ունենում են լուրջ հետևանքներ: Կարծում եմ «ՔԵՆՂԼ» նախագիծը

ապագայում եթե իրականացվի, ապա մեր բնական գիտություններն այս դեպքում շատ կշահեն:

Ինչո՞վ կբացատրեք այն հանգամանքը, որ ՀՀ ԳԱԱն, օրենսդրորեն հանդիսանալով ՀՀ Կառավարության պաշտոնական խորհրդատուն, փաստորեն, բացասական կարծիք է տվել «ՔԵՆԴԼ» ծրագրի իրականացման վերաբերյալ, իսկ ՀՀ կառավարությունը ծրագրին առաջնային կարգավիճակ է տվել:

Նախևառաջ ես առաջին անգամ եմ լսում, որ ակադեմիան բացասական կարծիք է արտահայտել, որովհետև «ՔԵՆԴԼ»-ի տնօրինության մոտ կա ԳԱԱ նախկին նախագահի՝ Ֆադեյ Սարգսյանի կարծիքը, որտեղ նա բավական դրական կարծիք է արտահայտել «ՔԵՆԴԼ» ծրագրի նկատմամբ: Ակադեմիայի աշխատակիցներից շատերը ողջունում են «ՔԵՆԴԼ» նախագիծը, համարում են, որ իրոք նմանատիպ արագացուցիչ լինելու պարագայում մեր գիտությունը կշահի, ոչ թե կտուժի: Իսկ ինչ հիմքեր ունեն որոշ ակադեմիկոսներ, որ չեն ուզում «ՔԵՆԴԼ» լինի, հարցրեք նրանց:

Ինչո՞վ կբացատրեք այն հսկայական և ակնառու տարբերությունը, որն առկա է «ՔԵՆԴԼ» ծրագրի իրականացման համար հայտարարվող մոտ 60 մլն ԱՄՆ դոլար և Մեծ Բրիտանիայում արդեն գործող և գրեթե նույն, ըստ պարամետրերի, “Diamond” արագացուցիչի կառուցման համար պահանջվող մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար արժեքների միջև: Ըստ Ձեզ, ո՞րն է այստեղ ապատեղեկատվությունը:

Ապատեղեկատվություն չկա, արագացուցիչները լինում են տարբեր չափսերի: Մեր արագացուցիչի տրամագիծը լինելու է մոտավորապես 40-45 մետր, օղակի երկարությունը մոտավորապես 220 մետրի է հավասար: «Diamond» օղակի երկարությունը շատ ավելի մեծ է, դրա համար էլ ավելի թանկ արժե: Մեր արագացուցիչը կարելի է համեմատել շվեյցարական SLS-ի հետ, որի չափերը մի քիչ ավելի մեծ են, քան մեր արագացուցիչն է լինելու: SLS-ի արժեքը ընդամենը 100 մլն շվեյցարական ֆրանկ է, որը եթե դոլարի վերածենք, կլինի մոտավորապես 75 մլն դոլար: Այսինքն՝ այն հաշվարկները, որ «ՔԵՆԴԼ»-ը կնստի մոտավորապես 60 մլն եվրո, դա համապատասխանում է իրականությանը, և այդ հաշվարկները արվել են միջազգային ճանաչված էքսպերտների կողմից, որոնք արագացուցիչների շինարարության մեծ փորձ ունեն: Այնպես որ, սա ապատեղեկատվություն է այն մարդկանց կողմից, որոնք գործից տեղյակ չեն կամ այդ գործից շատ բան չեն հասկանում, այստեղից այնտեղից ինչ-որ բան են լսում և տարածում: «Diamond»-ը ուրիշ չափսեր ունի, խնդիրներն այնտեղ մի քիչ ուրիշ են: Դրանք տարբեր սարքեր են, տարբեր չափսերի, բնականաբար ծախսերը տարբեր են լինում:

Պարոն Հարությունյան, Ձեր ասուլիսից հետո շատ գիտնականներ մեզ հետ զրույցում նշում էին, որ Դուք թեմատիկ ֆինանսավորման հարցերին չանդրադարձաք, հատկապես թեմաների թվաքանակի խիստ սահմանափակման հետ կապված:

Ես երեք տարբեր ասուլիսների ժամանակ անդրադարձել եմ թեմատիկ ֆինանսավորմանը, բազմիցս խոսել եմ դրա մասին: Նախկինում ֆինանսավորվել է 711 թեմա, հիմա՝ 130: Եթե հաշվի առնենք նաև միջազգային ծրագրերը, ապա այսօր ֆինանսավորվում է մոտավորապես 180 թեմա:

Ինչո՞ւ մի քանի անգամ քիչ:

Նախևառաջ բազմիցս և նախկին վարչապետ Սերժ Սարգսյանի, և ներկայիս վարչապետ Տիգրան Սարգսյանի օրոք ասել եմ, որ թեմատիկ ծրագրերն իրենց

բովանդակությամբ կրկնում են բազային ծրագրերը, և 711 թեման Հայաստանի նման փոքր պետության համար սարսափելի մեծ թիվ է: Թեմաների շատ լինելու հիմնական պատճառն այն է, որ դրանցում բազայինից կրկնություններ են եղել և եղել են թեմաներ, որոնք կես հաստիք, մեկ հաստիք, կամ մեկուկես հաստիքանոց թեմաներ են եղել: Չի կարելի կես հաստիքով թեմա անել: Իրականում չափից ավելի մանրամասնած էին այս թեմաները: Ճիշտ է, պետք է աջակցել բազային թեմաներին, բայց կրկնություն չպետք է լինի: Ստացվում է՝ նույն բանի համար կրկնակի փող են ստանում: Դրա մասին ես ժամանակին ահազանգել եմ:

Եթե այդպես էր, ապա արդյոք չէ՞ր կարելի ժամանակին փակել, կրճատել:

Բանն այն է, որ մեր գիտության ոլորտի աշխատողները ստանում են սարսափելի ցածր աշխատավարձ, և ցանկացած ֆինանսական նմանատիպ գործունեություն, կրճատումներ և այլն, կարող է առաջացնել ՀՀ-ում սոցիալական լուրջ լարվածություն: Այն ժամանակ, երբ բազային և թեմատիկ ծրագրերը հաստատվեցին, բազային ծրագրերի միջին աշխատավարձը կազմում էր 46 հազար, իսկ թեմատիկը՝ 37 հազար դրամ աշխատավարձ: Եվ եթե վերցնեինք կրճատեինք, գիտնականները ընդհանրապես սովամահ կլինեին:

Իսկ մի՞թե սոցիալական լարվածություն այսօր էլ չի առաջացել:

Սոցիալական լարվածություն չի առաջացել հետևյալ պատճառով. նախևառաջ գումարները, որոնք ծախսվում են թեմատիկ ծրագրերի վրա, դրանց զգալի մասը վերածվեց բազայինի, այսինքն՝ թեմատիկ ծրագրերի վրա ձևակերպված գիտնականները, որոնք միայն թեմատիկի վրա էին ձևակերպված, նրանք ձևակերպվեցին բազայինի վրա: Այսինքն՝ այսօր գիտության մեջ չկա աշխատող այդպիսի մի գիտնական, որոնք նախկինում թեմատիկ ծրագրերի վրա ձևակերպված են եղել, հիմա բազայինում չլինեն, բոլորն էլ բազայինում ձևակերպված են: Հավաստիացնում եմ ձեզ, որ հիմնավորված լուրջ հաշվարկներ են արվել՝ Հայաստանում օրիգինալ ծրագրերի թիվը 200-220-ից ավելի լինել չի կարող, այսինքն՝ 711 թիվը ուռճացված թիվ էր: Բնականաբար, երկար ժամանակ այդ համակարգը, 94 թվականից սկսած մինչև վերջին թեմատիկ ծրագրերի մրցույթը, դա գործել էր, նախկինում ավելի շատ՝ 1000-ից ավել ծրագրեր են եղել: Այսօր մոտավորապես 180 ծրագրեր են մնացել, որոնցից 130-ը մրցույթի, իսկ մնացածը միջազգային մրցույթների շրջանակներում է, սա իրականում այն թիվն էր, որը համապատասխանում էր Հայաստանի իրական գիտական պոտենցիալին. սա ճիշտ քայլ էր և կարծում եմ դրական հետևանքները մենք երկու տարի հետո կզգանք:

Ինչպե՞ս կմեկնաբանեք, օրինակ, ԳՊԿ-ի կողմից հայտարարվող անկախ գիտական փորձաքննության արդյունքում ֆինանսավորման է արժանացել Լևոն Սարգսյանի՝ ՀՀ նախագահի եղբոր կողմից ներկայացված թեման: Ինչո՞վ է սա պայմանավորված:

Լևոն Սարգսյանի ծրագիրն առաջին փուլով չէր անցել, երկրորդ՝ բողոքարկման փուլում ծրագիրը ստացավ բարձր գնահատական և անցավ: Ի դեպ, ասեմ, որ Լևոն Սարգսյանը ճանաչված հայագետ է, բարձր վարկանիշ ունեցող բավական ճանաչված գիտնական է և ինձ զարմացնում է այդ հարցը՝ ինչո՞ւ, եթե ՀՀ նախագահի եղբայրն է, իրավունք չունի՞ գիտնական լինելու:

Մի՞թե չկար նրանից լավ ծրագիր և մի՞թե դեր չխաղաց նախագահի եղբայրը լինելու հանգամանքը:

Օրինակ՝ ինչո՞ւ հարց չեք տալիս, իմ տղան էլ է մրցույթին մասնակցել և չի անցել, իմ մերձավորներից շատերը չեն անցել, մեր ամբիոնից ոչ մի թեմատիկ ծրագիր չի անցել: Ինչո՞ւ ես ոչ մի թեմատիկ ծրագրում չկամ... Ճիշտ է, որոշ մարդիկ նեղացել են: Բացի այդ, ծրագրերը ես չեմ ֆինանսավորում, ԳՊԿ-ի նախագահը չի ֆինանսավորում, այլ հանձնաժողովներն են առաջարկում ֆինանսավորում և նախարարի հրամանով ֆինանսավորվում են:

Պարոն Հարությունյան, 2010 թ. վերջին ՀՀ նախագահի Վերահսկողության ժառանգությունը հրապարակեց իր ստուգումների արդյունքները ԳՊԿ-ում: Բացահայտեցին էական բացթողումներ, հատկապես 76 մլն դրամ միջոցներով գույք էր ձեռք բերվել: Որպես այդ չարաշահումների հեղինակ աշխատանքից հեռացվեց այդ ժամանակվա ԳՊԿ-ի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյանը:

Կարեն Հայրապետյանն աշխատանքից չի հեռացվել, նա իր դիմումի համաձայն է գնացել և չարաշահումների խնդիր չկա: Բանն այն է, որ գույքի ձեռքբերման հետ կապված մենք դիմել էինք կառավարությանը, մենք տեղափոխվեցինք նոր շենք, բնականաբար սեղան և աթոռ պետք է լինեին, որ կարողանայինք աշխատել: Ի դեպ, ասեմ, որ չկա մի շաբաթ, որ ԳՊԿ արտերկրից հյուրեր չունենա, օգնության ձեռք մեկնեցին գիտական հիմնարկները: Մենք կառավարությանը դիմեցինք 20 մլն-ի խնդրանքով, կառավարությունը դեկտեմբեր ամսին գումարը հատկացրեց, և մենք չկարողացանք մրցույթ հայտարարել և գույք ձեռք բերել, եւ այդ գումարը նորից վերադարձավ բյուջե: Իսկ գույքը գիտական հիմնարկները տվել են մեզ ժամանակավոր օգտագործման համար:

Իսկ 76 մլնը վերադարձվեց բյուջե՞:

Ոչ: 20 մլն հետ վերադարձավ բյուջե, իսկ մնացած գույքը մեզ տրվել է ժամանակավոր օգտագործման համար:

Ինչպե՞ս կմեկնաբանեք այն փաստը, որ այս տարի էլ նմանատիպ բացթողումներ է արձանագրվել արդեն ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից:

Հինգ առաջարկություն է եղել բացթողումների հետ կապված, մասնավորապես գիտական գործուղումների հետ կապված: Գիտական գործուղումների հաշվետվությունները մենք պահանջում ենք, որ գիտական հիմնարկները մեզ տան: Դիտողությունը այն է՝ քանի որ անմիջապես գումարները ԳՊԿ-ից են փոխանցվում, ապա հաշվետվությունը մենք պետք է ընդունենք, դա ուղղված է արդեն, և արդեն մենք ենք հաշվետվություններն ընդունում: Իսկ նախկին հավետվությունները գնացել են, տեղում ստուգել են և որևէ գործուղում չկա, որն իրականացված չլինի:

Ինչ վերաբերում է կարգերին, համապատասխան կարգեր չկան, և մենք ստեղծել ենք համապատասխան կարգեր: Վերահսկիչ պալատի դիտողություններից մեկն էլ այն էր, որ համապատասխան գիտաժողովի համար մենք չունենք կարգեր, այդ կարգերն արդեն ստեղծված են, և մենք արդեն աշխատում ենք: Այսինքն՝ գրեթե բոլոր դիտողությունները շտկված են. փաստորեն հինգ թերություններից չորսը շտկված են, մեկն ընթացքի մեջ է:

Նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ «Հայկական վիրտուալ գիտական գրադարան» ծրագրի շնորհանդեսը, որն ըստ արժանվույն գնահատվեց գիտակրթական հանրության կողմից: Ի՞նչ առաջարկներ կան:

Հայկական վիրտուալ գրադարանի գաղափարը եղել է մի քանի տարի առաջ, ի դեպ ասեմ, որ գաղափարի հեղինակներից մեկը իմ օպոնենտներից ԳԱՏԱՀ-ի հիմնադիր տնօրեն Հարություն Կարապետյանն էր: Գաղափարը դեռ այն ժամանակ կար, որ նմանատիպ գիտական գրադարան պետք է ունենանք: Հետագայում ստացվեց այնպես, որ գաղափարը բաժանվեց մի քանի մասերի, սկզբից ենթադրվում էր, որ Springer և Elsevier Միացյալ Նահանգների քաղաքացիական հետազոտությունների միջնորդությամբ մենք պետք է ունենանք ինչ-որ մի ծրագիր, որտեղ սահմանափակ քանակությամբ անվանումներով մոտավորապես 7000 գիտական ամսագրից և մոտ հինգ հազար էլեկտրոնային գիտական գրականությունից կարող էինք օգտվել, սա մեզ ձեռք չտվեց: Մենք պայմանագիր ստորագրեցինք Springer հետ, որը մեզ հնարավորություն է տալիս օգտվել մոտավորապես 2000 էլեկտրոնային ամսագրից և մոտ հինգ հազար էլեկտրոնային գիտական գրականությունից և մեր հանրապետության բոլոր գիտական հիմնականները ազատ մուտք ունեն Springer-ի համապատասխան սայթ և այնտեղից կարողանում են ազատ օգտվել:

Մենք ենթադրում ենք, որ մոտ ապագայում պայմանագիր կունենանք նաև Elsevier-ի հետ և համաշխարհային գիտական գրականության 70-80 տոկոսին Հայաստանի գիտնականները կունենան ազատ ելք ու մուտք: Իսկ վիրտուալ գրադարանը մեկ պատուհանի սզբունքով հնարավորություն կտա այդ բոլոր փաթեթներից օգտվել: Սա շատ կարևոր է մեզ համար, քանի որ շատ հեշտ է օգտվելը: Սա էապես հեշտացնում է գիտնականի գործը:

Եթե ամփոփենք 2011-ը, ի՞նչ ձախողումներ կային: Գիտության ֆինանսավորման ավելացում այդպես էլ տեղի չունեցավ, սա ձախողում էր:

Գիտության բյուջեն ավելացավ մոտ յոթ տոկոսով (ի դեպ, մնացած ոլորտներում ավելի քիչ է ավելացել): Համոզված եմ, որ եթե միջոցներ լինեին, կառավարությունը կտար, որովհետև ձեզ վստահեցնում եմ, որ ՀՀ նախագահը և վարչապետը շահագրգիռ են: Եվ այն փաստը, որ մենք ինովացիոն պրոյեկտների ֆինանսավորում ենք իրականացում, հսկայական քանակությամբ միջազգային պայմանագրեր ենք ստորագրել, նույնպես խոսում է այն մասին, որ կառավարությունը հասկանում է գիտության արժեքը:

Ինչ բացթողումներ կան, ինչ կարող էր լինել, որ չեղավ. կարծում եմ՝ ֆինանսավորման նոր կարգերը, որ այս տարի չհաստատվեցին, այնքան էլ լավ չէ, սա շատ կարևոր է: Հին կարգերը չեն աշխատում, դրա համար վերահսկիչ պալատի կողմից հայտնաբերված բացթողումների մեծ մասը պայմանավորված էր գիտության ոլորտում մեր կարգերի և օրենքների անկատար լինելով: Հատկապես ֆինանսավորման նոր կարգերը, որ այս տարի չհաստատվեցին, այնքան էլ լավ չէ մեզ համար, հույս ունեմ, որ մյուս տարի կլինի: Հիմա մենք անցել ենք անկախ փորձագետների համակարգի օգտագործման հատկապես թեմատիկ կամ գրանտային ծրագրերի ֆինանսավորման ոլորտում:

Ներկայացել են Գիտատեխնիկական փորձաքննության մասին օրենքը, որը նախագահը երիտասարդների հետ հանդիպման ժամանակ խոստացավ, որ մյուս տարի կաշխատենք պառլամենտը հաստատի: Այս երկու կետերը որ 2010-ին չիրականացան, 2012-ին կլինեն, որովհետև առանց սրանց շատ դժվար է աշխատելը:

Սիրանույշ Պապյան